

### ՊԵՐՃՈՒՑԻ ՍՅՈՒՐՄԵՆՅԱՆԻ ՀՈՒՇԵՐԸ ՍՈՂՈՄՈՆ ԹԵՎԵՐՅԱՆԻ ՄԱՍԻՆ

1921 թ. մարտի 15-ին Բելոլինում Հայոց ցեղասպանության զլխավոր կազմակերպիչներին ցմեկին, Օսմանյան կայսրության ներքին գործերի նախարար Թալեաթ փաշային պատուհանաբեր և աղմկահարույց դատավարությունից անպարտ արձակվելուց հետո ժողովրդական վրիժառու Սողոմոն Թեհլերյանը (1896-1960 թթ.) անցել է Հարավսլավիա ու մինչև 1951 թ. ապրել Բելգրադում, այնուհետև ընտանիքով տեղափոխվել է Մարոկոյի Կասաբլանկա քաղաք, որտեղ ապրել է մինչև 1957 թվականը:

Ս. Թեհլերյանի կյանքի այդ շրջանը վրիպել է նրա կենսագիրների ուշադրությունից, սակայն, բարեբախտաբար, վաղուց ի վեր Կասաբլանկայում բնակվող Պերճուհի Սյուրմենյանի հուշերի օգնությամբ հնարավոր է դառնում մասամբ լրացնել այդ բացը:

Ծնորհակալությամբ նշենք, որ վերոհիշյալ հուշերի պատճենը մեզ է տրամադրել 1990-1992 թթ. Մարոկոյում բնակված Սեդա Գրիգորյանը: Հետագայում մենք անակագրական կապ հաստատեցինք Պ. Սյուրմենյանի հետ, և նա իր անակին կցելով մեզ ուղարկեց նաև Ս. Թեհլերյանի մի քանի անտիպ լուսանկարները, այդ թվում և մեկը՝ «Մարօք քաշած» (Մարոկոյում նկարված), որոնք հրատարակեցինք Հ. Յ. Դաշնակցության «Դրօշակ» եռամսյա հանդեսի 2004 թ. թիվ 4-ում, իսկ նկարներից մեկը՝ Թեհլերյանի ինքնագրով, հրատարակում ենք այժմ: Մեզ ուղարկած անակում, բացատրելով Թեհլերյանների ընտանիքի մեկնումը Մարոկոյից, Պ. Սյուրմենյանը գրում է. «Տէր և տիկին Թեհլիրեան կը փափագէին ապրիլ հայաշատ շրջանակի մը մէջ, ուր բարոյապէս լաւ պիտի զգային»: Այդ իսկ պատճառով Ս. Թեհլերյանը 1957 թ. ընտանիքով տեղափոխվել է ԱՄՆ-ի Սան Ֆրանցիսկո քաղաք, որտեղ էլ վախճանվել է 1960 թ. մայիսի 23-ին: Իսկ իր անակը Պ. Սյուրմենյանը եզրափակում է այսպէս. «Ահա պատուհաններ անցեալի թանկագին յիշատակներէն»:

Եվ այդ «անցեալի թանկագին յիշատակներէն» է, որ այժմ ներկայացնում ենք «Էջմիածին» ամսագրի ընթերցողների ուշադրությանը՝ հուսով, որ սույն հրատարակումը կարող է օգտակար լինել Ս. Թեհլերյանի ամբողջական կենսագրականը ստեղծել ցանկացող ուսումնասիրողներին:

